Լրամշակված նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-1214[1]-11.12.2025-ՊԱ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

«ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Փրկարար ծառայության մասին» 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-171-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 28-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2 Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.1-ին հոդվածով.

«Հոդված 7.1. Լիազոր մարմնի օպերատիվ կառավարման գրասենյակը

1. Օպերատիվ կառավարման գրասենյակը գործում է Լիազոր մարմնի կառուցվածքում:

2. Գրասենյակի հիմնական գործառույթներն են.

1) արտակարգ իրավիճակների կամ պատահարների վերաբերյալ հեռախոսազանգերի, ինչպես նաև՝ այլ միջոցներով կամ եղանակներով ստացվող տեղեկությունների ընդունումը, գրանցումը, դասակարգումը, համապատասխան խորհրդատվության տրամադրումը.

2) սույն մասի 1-ին կետում նշված տեղեկությունների՝ ըստ ենթակայության փոխանցումը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ օպերատիվ արձագանքի ապահովումը.

3) արտակարգ իրավիճակի կամ պատահարի վայր մեկնած ծառայողներին անհրաժեշտ տեղեկությունների և կողմնորոշիչ տվյալների տրամադրումը.

4) արտակարգ իրավիճակների առաջացման (դրա սպառնալիքի) դեպքում, ինչպես նաև բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների անցկացման ժամանակ ոստիկանության և փրկարար ծառայության ներգրավման, կառավարման մարմինների և բնակչության ազդարարման ու իրազեկման կազմակերպումը, հանրային միասնական հաղորդակցության ապահովումը, կենտրոնացված ազդարարման համակարգի գործունեության կազմակերպումը.

5) քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության հանրապետական պլաններն ամբողջությամբ կամ մասամբ գործողության մեջ դնելը.

6) արձանագրված արտակարգ իրավիճակների կամ պատահարների վերաբերյալ տեղեկությունների ստացումը, մշակումը և ամփոփումը.

7) արտակարգ իրավիճակների դեպքում, բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների, ինչպես նաև արտակարգ իրավիճակների հետևանքների վերացմանը ներգրավված ոստիկանության և փրկարարական ծառայողների գործողությունների կառավարման ապահովումը.

8) Լիազոր մարմնի, այլ շահագրգիռ պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների տեղեկատվական շուրջօրյա ապահովումը՝ արտակարգ իրավիճակների բնագավառում.

9) սույն մասի 4-րդ կետով նախատեսված դեպքում ոստիկանության և փրկարար ծառայության գործունեության ներդաշնակ աշխատանքի ապահովումը:»:

Հոդված 3. Օրենքի 31-րդ հոդվածի 4.1-ին մասում «Լիազոր մարմնի ուսումնական» բառերից առաջ լրացնել «Լիազոր մարմնում փրկարար ծառայության պաշտոններում, ինչպես նաև» բառերը:

Հոդված 4.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2026 թվականի փետրվարի 15-ից:

2. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը՝

1) հաստատվում է ներքին գործերի նախարարության օպերատիվ կառավարման գրասենյակի կանոնադրությունը.

2) փոփոխություններ են կատարվում ներքին գործերի նախարարության և փրկարար ծառայության կանոնադրություններում:

3. Սույն օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից ներքին գործերի նախարարության կազմում գործում է օպերատիվ կառավարման գրասենյակը և դադարեցվում է փրկարար ծառայության ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի գործունեությունը:

4. Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված՝ ներքին գործերի նախարարության քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություն կատարելուց հետո՝ վեց

ամսվա ընթացքում, ներքին գործերի նախարարության քաղաքացիական ծառայության պաշտոններում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձինք փրկարար ծառայողներին և փրկարար ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին կարող են նշանակել ներքին գործերի նախարարության քաղաքացիական ծառայության պաշտոններում: Այս դեպքում թեկնածուի հետ անցկացվում է հարցազրույց, որի անցկացման կարգը սահմանում է հանրային ծառայությունը համակարգող փոխվարչապետը՝ սույն օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում:

5. Փրկարար ծառայողը, քաղաքացիական հատուկ ծառայության քաղաքացիական ծառայողը (եթե նրա վրա տարածվում է հավասարեցման պահանջը), որը սույն հոդվածի 4-րդ կետով սահմանված կարգով կզբաղեցնի ներքին գործերի նախարարության քաղաքացիական ծառայության պաշտոն, նշանակվելու օրվանից հետո՝ հինգ տարվա ընթացքում, օգտվում է «Պետական կենսաթոշակների մասին» օրենքով սահմանված երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունքից: Այս դեպքում քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցրած ժամանակահատվածը համարվում է զինվորական ծառայության ստաժ: Պետական կենսաթոշակ ստանալու պահից տվյալ քաղաքացիական ծառայողի աշխատավարձի հաշվարկն իրականացվում է քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնի համար օրենքով սահմանված կարգով: Նախկինում հաշվարկվող հավելումները և լրավճարներն այլևս չեն հաշվարկվում:

6. Սույն հոդվածի 4-րդ կետով սահմանված կարգով քաղաքացիական ծառայության պաշտոնի նշանակվելու դեպքում պահպանվում և հաշվի են առնվում նախկինում կիրառված կարգապահական տույժերը, խրախուսանքի միջոցները, կատարողականի գնահատման արդյունքները, և պահպանվում է ամենամյա արձակուրդի չօգտագործված օրերի իրացման իրավունքը:

Կ-1214[1]-11.12.2025-ՊԱ-011/1

~~Առաջին~~ Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

«ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ~~ԼՐԱՑՈՒՄ~~ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Փրկարար ծառայության մասին» 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-171-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 28-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.1-ին հոդվածով.

«Հոդված 7.1. Լիազոր մարմնի օպերատիվ կառավարման գրասենյակը

1. Օպերատիվ կառավարման գրասենյակը գործում է Լիազոր մարմնի կառուցվածքում:

2. Գրասենյակի հիմնական գործառույթներն են.

1) արտակարգ իրավիճակների կամ պատահարների վերաբերյալ հեռախոսազանգերի, ինչպես նաև՝ այլ միջոցներով կամ եղանակներով ստացվող տեղեկությունների ընդունումը, գրանցումը, դասակարգումը, համապատասխան խորհրդատվության տրամադրումը.

2) սույն մասի 1-ին կետում նշված տեղեկությունների՝ ըստ ենթակայության փոխանցումը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ օպերատիվ արձագանքի ապահովումը.

3) արտակարգ իրավիճակի կամ պատահարի վայր մեկնած ծառայողներին անհրաժեշտ տեղեկությունների և կողմնորոշիչ տվյալների տրամադրումը.

4) արտակարգ իրավիճակների առաջացման (դրա սպառնալիքի) դեպքում, ինչպես նաև բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների անցկացման ժամանակ ոստիկանության և փրկարար ծառայության ներգրավման, կառավարման մարմինների և բնակչության ազդարարման ու իրազեկման կազմակերպումը, հանրային միասնական հաղորդակցության ապահովումը, կենտրոնացված ազդարարման համակարգի գործունեության կազմակերպումը.

5) քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության հանրապետական պլաններն ամբողջությամբ կամ մասամբ գործողության մեջ դնելը.

6) արձանագրված արտակարգ իրավիճակների կամ պատահարների վերաբերյալ տեղեկությունների ստացումը, մշակումը և ամփոփումը.

7) արտակարգ իրավիճակների դեպքում, բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների, ինչպես նաև արտակարգ իրավիճակների հետևանքների վերացմանը ներգրավված ոստիկանության և փրկարարական ծառայողների գործողությունների կառավարման ապահովումը.

8) Լիազոր մարմնի, այլ շահագրգիռ պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների տեղեկատվական շուրջօրյա ապահովումը՝ արտակարգ իրավիճակների բնագավառում.

9) սույն մասի 4-րդ կետով նախատեսված դեպքում ոստիկանության և փրկարար ծառայության գործունեության ներդաշնակ աշխատանքի ապահովումը:»:

Հոդված 3. Օրենքի 31-րդ հոդվածի 4.1-ին մասում «Լիազոր մարմնի ուսումնական» բառերից առաջ լրացնել «Լիազոր մարմնում փրկարար ծառայության պաշտոններում, ինչպես նաև» բառերը:

Հոդված ~~3~~4.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2026 թվականի փետրվարի 15-ից:

2. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը՝

1) հաստատվում է ներքին գործերի նախարարության օպերատիվ կառավարման գրասենյակի կանոնադրությունը.

2) փոփոխություններ են կատարվում ներքին գործերի նախարարության և փրկարար ծառայության կանոնադրություններում:

3. Սույն օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից ներքին գործերի նախարարության կազմում գործում է օպերատիվ կառավարման գրասենյակը և դադարեցվում է փրկարար ծառայության ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի գործունեությունը:

4. Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված՝ ներքին գործերի նախարարության քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություն կատարելուց հետո՝ վեց

ամսվա ընթացքում, ներքին գործերի նախարարության քաղաքացիական ծառայության պաշտոններում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձինք փրկարար ծառայողներին և փրկարար ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին կարող են նշանակել ներքին գործերի նախարարության քաղաքացիական ծառայության պաշտոններում: Այս դեպքում թեկնածուի հետ անցկացվում է հարցազրույց, որի անցկացման կարգը սահմանում է հանրային ծառայությունը համակարգող փոխվարչապետը՝ սույն օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում:

5. Փրկարար ծառայողը, քաղաքացիական հատուկ ծառայության քաղաքացիական ծառայողը (եթե նրա վրա տարածվում է հավասարեցման պահանջը), որը սույն հոդվածի 4-րդ կետով սահմանված կարգով կզբաղեցնի ներքին գործերի նախարարության քաղաքացիական ծառայության պաշտոն, նշանակվելու օրվանից հետո՝ հինգ տարվա ընթացքում, օգտվում է «Պետական կենսաթոշակների մասին» օրենքով սահմանված երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունքից: Այս դեպքում քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցրած ժամանակահատվածը համարվում է զինվորական ծառայության ստաժ: Պետական կենսաթոշակ ստանալու պահից տվյալ քաղաքացիական ծառայողի աշխատավարձի հաշվարկն իրականացվում է քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնի համար օրենքով սահմանված կարգով: Նախկինում հաշվարկվող հավելումները և լրավճարներն այլևս չեն հաշվարկվում:

6. Սույն հոդվածի 4-րդ կետով սահմանված կարգով քաղաքացիական ծառայության պաշտոնի նշանակվելու դեպքում պահպանվում և հաշվի են առնվում նախկինում կիրառված կարգապահական տույժերը, խրախուսանքի միջոցները, կատարողականի գնահատման արդյունքները, և պահպանվում է ամենամյա արձակուրդի չօգտագործված օրերի իրացման իրավունքը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ (Կ-1214-11.12.2025-ՊԱ-011/1) ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	**ՀՀ կառավարություն**	«Փրկարար ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագիր, նոր լրացվող 3-րդ հոդված, նախագծի 3-րդ հոդված (նոր խմբագրությամբ՝ 4-րդ հոդված)	Հաշվի առնելով, որ ՀՀ ներքին գործերի նախարարության կառուցվածքում նոր ձևավորվող Օպերատիվ կառավարման գրասենյակը իրականացնելու է նաև «Փրկարար ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծով նախատեսված ճգնաժամային իրավիճակների կառավարման գործառույթներ, ուստի նախատեսվում է Օպերատիվ կառավարման գրասենյակում սահմանել փրկարար ծառայության պաշտոններ: Գործող օրենքի	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	**Ընդունվել է:**

			համաձայն՝ Ներքին գործերի նախարարը լիազորված է՝ նշանակելու Լիազոր մարմնի ուսումնական հաստատության փրկարար ծառայության պաշտոններում, բայց ոչ՝ նախարարության կառուցվածքում ներառված ստորաբաժանման փրկարար ծառայության պաշտոններում: Ըստ այդմ, առաջարկում ենք «Փրկարար ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ հոդվածով. **«Հոդված 3.** Օրենքի 31-րդ հոդվածի 4.1-ին մասում «Լիազոր մարմնի ուսումնական» բառերից առաջ լրացնել «Լիազոր մարմնում փրկարար ծառայության պաշտոններում, ինչպես նաև» բառերը:»: Միաժամանակ, հաշվի առնելով վերոգրյալը, առաջարկում ենք օրենքի նախագծի վերնագրում «ԼՐԱՑՈՒՄ» բառը փոխարինել «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառով և		

			վերանայել օրենքի նախագծի 3-րդ հոդվածի համարակալումը:		
2.	**ՀՀ կառավարություն**	«Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ	«Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ նախարարը **ինքնուրույն** ղեկավարում է նախարարությանը վերապահված գործունեության ոլորտը, ինքնուրույն մշակում և իրականացնում է Կառավարության՝ նախարարությանը վերապահված գործունեության ոլորտի քաղաքականությունը, իրականացնում է նախարարությանը ենթակա մարմնի, ինչպես նաև նախարարությանը ենթակա կազմակերպության կառավարումը և վերահսկողություն է իրականացնում նրանց նկատմամբ, այդ թվում՝ վերանայում է նախարարությանը ենթակա մարմնի որոշումները: Բացի այդ, ՀՀ կառավարության 2024թ. նոյեմբերի 15-ի «Ոստիկանության բարեփոխումների իրականացման	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	**Ընդունվել է:**

			ռազմավարությունը և դրանից բխող 2024-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 1803-Լ որոշմամբ հաստատված 2-րդ հավելվածի 1-ին ուղղության 5-րդ՝ «Ոստիկանության արտաքին նկարագրի բարելավում, միասնականացում» գործողության շրջանակներում, որպես արդյունք, նախատեսվում է ընդունել ոստիկանական համազգեստների որակի և դիզայնի միասնական չափանիշներ սահմանող՝ ՆԳ նախարարի հրաման: Միաժամանակ, ներկայումս ոստիկանության ծառայողի համազգեստի նկարագիրն ու կրելու ժամկետները սահմանելու լիազորությունը վերապահված է ՀՀ կառավարությանը, ինչը պայմանավորված է եղել ոստիկանության՝ մինչև Ներքին գործերի նախարարության ձևավորումը ունեցած կարգավիճակով: Ըստ այդմ, առաջարկում ենք առաջին ընթերցմամբ ընդունված		

			նախագծերի փաթեթում ներառել նաև «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ, որով առաջարկում ենք գործող օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասում «այդ թվում՝ համազգեստ, որի նկարագիրը և կրելու ժամկետները սահմանում է Կառավարությունը» բառերը փոխարինել «որի որակի և դիզայնի միասնական չափանիշները, ինչպես նաև նկարագիրը և կրելու ժամկետները սահմանում է Լիազոր մարմնի ղեկավարը» բառերով:		